բարձրութիւն քնեազ Գրիգոր Ալէք[ս]անդրովիչ Պոտէմկինին և կամ այլոց կուսակալ իշխանաց նորին վերամբարձ տէրութեան, գրեթէ աներկբայ խոկոյն գրէին կամ հրամայէին զքեզ գրել վասն դիմելոյն իմոյ դէպ ի յայդր՝ թարց իմիք յապաղելոյ։ Իսկ այժմս ոչ լինէր մեզ վերատին սպասել իբրև ամս երկուս, ակնարկելով ի յարևելից մինչև ի մուտս արևու, առ ի գտանել զնորոգ պատասխան ի ձէնջ։ Մի՞թէ տէրութիւն ձեր ոչ է հմուտ, որ առն ծերացելոյ օր մի իբրև զտարի երկար թուի, նաև զբարի խորհուրդ նորին, որ է յօգուտ ազգին, առաւել յառաջանայ ի ժամանակ պատերազմի, քան թէ ի խաղաղութեան, որպէս ինքնդ իսկ ըղձաւ, զի լիցի այդպէս։

Արդ, որովհետև մերձ է ջախջախումն գլխոյ երեքգլխեան վիշապին՝ ամենաղօր բազկաւ տեառն, ի սաւառամամբ և սլացմամբ չորեքթևեան արծուոյն, նմին իրի պարտէ և ազգին Հայոց, միով կերպիւ ի միւս կողմանէ լատիւ հարկանել և խորտակել զսնակուշտս նորին, որ իսպառ սատակեսցի և ամենևին բարձցէ յերկրէ զյիշատակս նորին։ Ահա զինչ արասցուք, որ այն երկու օրհնեալ տէրութիւնքն քրիստոնէյից, որ է Ինկլիզն և Պռուսն, ոչ թողուն ողորմած թագուհւոյն յառաջիլ ի գործս իւր։ Նաև կամին զպատերազմ գոգռել ընդդէմ նմա։ Վասն որոյ ցաւիմ ի սրտէ, որ ոչ կարեմ գտանել զելս, զի եկից այդր և ծառայեցից ազգիս ի փառս Յիսուսի, որոյ գինեմք պատուական արեան նորին (Ս. Եսայեայ, 53,5), որ նա վիրաւորեցաւ վասն մեղաց մերոյ և պատժեցաւ վասն մերոց անօրէնութեանց, ի դատ խաղաղութեան մերոյ ի նմայ և նորա վիրօքն բժշկեցաք»։

Զմեկնութիւն բանիս այսմիկ զիս ոչ է անկ առ ի գրել, քանզի աստուածաբանից է տուեալ զայն գիտութիւն և ազատութիւն առ ի կարօղանալ ձեռնամուխ լինիլ գործոյն այսմիկ և խաղաղութիւն քարոզել ի մէջ Աստուծոյ և մարդկան։ Իսկ ես, որ մէն մի աշխարհական գոլով, անձամբ անձին եթէ ոչ յանձն առնուցում զմահ վասն անմահին, որ մեռաւ յաղագս իմ, իսկ և յաղագս բազմաց, զիա՞րդ կամիւ իւիք կարեմք կոչիլ քրիստոնեայս, արդէն ջանասցուք կերպիւ իւիք ազատիլ ի հպատակութենէ այլազգեաց և անօրէն բռնաւորաց, կամ մեռցուք արիաբար վասն անուան փրկչին մերոյ և կամ յաջողեսցի մեզ Աստուած ի յառաջադիմութիւնս մեր, կեցցուք և փառաւոր արասցուք զանուն սուրբ նորա։ Բայց ես նմանիլ և հաւասարիլ ոչ կամիմ կանացի արանց, որք ճոխացեալ են ընչիւք և ստացուածովք, և ոչ այնց, որք ցրուեալք կան ընդ ամենայն երկիր իբրև զոչխար թարց հովուի, որ օր աւուր լքանին և նուազին՝ ոմն ցաւոք և ոմն հեծութեամբ, ոմն ի խորոց սրտի հոգւոց հանելով յաղագս վշտին, և ոմն անարգեալ և այլ ազգի դառնութեանց հանդիպեալ, եղծանին և նաներանան։ Վասն որոյ եթէ ոչ տեառն արկեալ իցէր ի սիրտ զթածառատ տէրութեանդ վասն նպաստամատոյց լինելոյ ազգիդ և ազատելոյ նոսա ի տառապանաց անտի իւրեանց, որ ի Ղռիմ, ի յՕզօ, ի յԻսմայէլ և ի Քիլիայ, և կամ այլ ուրեք, վա՜յ լինէր կենաց նոցին, ըստ որում ասէ (Սաղմոս 11,5) «վասն տառապանաց աղքատին և հեծութեան տնանկին, այժմ յարեայց ասէ տէր, եդից զփրկութիւն իմ և համարձակեցայց ի նոսա»։ Որ և դերապայծառութիւնդ ոչ խնայեցէր ցանձդ տալոյ ի մէջ փորձանաց և վտանգից վասն ազգիդ և ի բաց թողեր զամենայն ախորժ կենցաղավարութիւնս ի Հաջի Բարխան քաղաքուջ զխնճոյս և զցնծութիւնս զհամադամ կերակուրս, զանուշահամ գինիս և զպէտպէտ քաղցրաւենիս, այլ ընտրեցէր ի վիշտս և ի նեղութիւնս լինիլ վասն ազգիդ, քան թէ ի խաղաղութեան և յանդորրութեան, յաղագս անուան նորին բարձրելոյ, որոյ հաւատարիմ պաշտօնեայ կարգեցար և նախնի սրբոց հարցն մերոց նմանեցար։

Զափազանց ուրախ եմ առ ի լսել զլուր յաղթութեան քրիստոնէից ընդդէմ թշնամեաց խաչի Քրիստոսի։ Երանի թէ մարմնոյ աչօք տեսանէաք իսպառ սպուռ կորնչումն նեռնասարաս տէրութեան նոցին։ Որպէս լսեմք աստ ի հեռուստ։

Նա ևս հազար անգամ երանի գերամեծար տէրութեանդ, որ շնորհիւ քնեազ Գրիգոր Ալէքսանդրովիչ Պոտէմկինին, արժանաւորութիւն ես ստացեալ